

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ
ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

- Վ. Գաբրիելյան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
- Վ. Ավանեսյան ՀՀ էկոնոմիկայի նախարար
- Դ. Սարգսյան ՀՀ ֆինանսների նախարար
- Ս. Կարապետյան ՀՀ գյուղատնտեսության նախարար
- Դ. Դումանյան ՀՀ առողջապահության նախարար
- Ա. Երիցյան ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար
- Հ. Հակոբյան ՀՀ սփյուռքի նախարար
- Ա. Աշոտյան ՀՀ կրթության և գիտության նախարար
- Ա. Ղարիբյան ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական
- Հ. Բեգլարյան ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
- Տ. Հարությունյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
- Հ. Թութունջյան ՀՀ վարչապետի օգնական
- Վ. Կտիկյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնակատար
- Ս. Տոնոյան ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
- Ա. Եգանյան ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՓՄՁ զարգացման վարչության պետ
- Հ. Միրզոյան Արդյունաբերության զարգացման հիմնադրամի տնօրեն

Ռ. Հարությունյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տնօրեն
Ժ. Արամյան	Գինեգործության և կոնյակագործության ոլորտային քարտուղար
Հ. Առուստամյան	Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտային քարտուղար
Ա. Գրիգորյան	Ճշգրիտ ճարտարագիտության ոլորտային քարտուղար
Ի. Առաքելյան	Հայկական կոնյակագործների միության նախագահի առաջին տեղակալ
Հ. Թովիշյան	«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Ա. Բադայան	«ՓՄՁ Ներդրումներ» ՈՒՎԿ-ի տնօրեն
Վ. Կարապետյան	Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների աջակցման ազգային կենտրոնի տնօրեն
Ս. Զաքարյան	«Հայաստանի դեղարտադրողների և ներմուծողների միություն» իրավաբանական անձանց միության տնօրեն
Ա. Խաչատրյան	«Սիտրոնիքս Արմենիա» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Բ. Ենգիբարյան	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն
Ա. Սալթանյան	«Նեյշնլ Ինսթրումենթս» ընկերության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն
Կ. Վարդանյան	ԻՏՁՄ-ի գործադիր տնօրեն
Մ. Հերզնյան	«Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության տնօրեն
Է. Ալեքսանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության քաղաքականության մշակման բաժնի պետ
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության իրականացման շրջանակներում հաստատված ոլորտային գործողությունների ծրագրերով սահմանված միջոցառումների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ

Կոնյակագործության և Գինեգործության ոլորտների գործողությունների ծրագրեր

(Վ. Ավանեսյան, Ռ. Հարությունյան, Ս. Կարապետյան, Դ. Դումանյան, Ա. Երիցյան, Ա. Ղարիբյան, Ժ. Արամյան, Ի. Առաքելյան, Տ. Սարգսյան)

9. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել «Ձարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տնօրեն Ռ. Հարությունյանին՝

ա. Կոնյակագործության ոլորտի գործողությունների ծրագրի 2.2.1-ին կետի կատարումն ապահովելու նպատակով մշակել և հաստատել երկրի և ոլորտի առաջնդման (բրենդինգի) որոշման կանոնակարգ և եռամսյա ժամկետում ապահովել միջոցառումների ամբողջական կատարումը,

բ. ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական Ա. Ղարիբյանի առաջարկությանը համապատասխան՝ կրճատել Կոնյակագործության ոլորտի գործողությունների ծրագրի 1.3.1-ին կետի կատարման ժամկետը,

գ. Գինեգործության ոլորտի գործողությունների ծրագրի 1.1.1-1.1.2-րդ կետերի կատարման վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2013 թվականի տարեվերջ,

դ. Գինեգործության ոլորտի գործողությունների ծրագրի 1.2.1-ին կետում «Հակակարկտային պաշտպանիչ» բառերը փոխարինել «Հակակարկտային պաշտպանության» բառերով և «Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր» սյունակից հանել «ՀՀ կառավարություն» բառերը.

2) ընդունել ի գիտություն ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանի հայտարարությունն այն մասին, որ՝

ա. Կոնյակագործության ոլորտի գործողությունների ծրագրի 1.1.1-1.1.4-րդ կետերը կկատարվեն սահմանված վերջնաժամկետում՝ մինչև 2014 թվականի հունվար ամիսը,

բ. երկամսյա ժամկետում Խաղողագործության զարգացման ռազմավարության վերջնական լրամշակված և համաձայնեցված տարբերակը կներկայացնի ՀՀ կառավարության քննարկմանը.

3) առաջարկել Հայկական կոնյակագործների միության նախագահ Ա. Գրիգորյանին՝

ա. Կոնյակագործության ոլորտի գործողությունների ծրագրի 2.4.1-ին կետի կատարումը մեկամսյա ժամկետում ապահովելու նպատակով հայկական կոնյակի ինտերնետային բազմալեզու պորտալի ստեղծման հետ կապված բոլոր հարցերը քննարկել և հաստատել գրավոր հարցումների միջոցով՝ վերջնական արդյունքների մասին զեկուցելով ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին,

բ. Հայկական կոնյակագործների միությունում քննարկման առարկա դարձնել Հայկական կոնյակագործների միության ինստիտուցիոնալ կայացման հարցը՝ անհրաժեշտության դեպքում քննարկմանը հրավիրելով ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին.

4) հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանին՝

ա. իր իսկ առաջարկությանը համապատասխան՝ վերանայել և ներկայացնել Գինեգործության գործողությունների ծրագրի նոր՝ իրատեսական ժամանակացույց,

բ. ձևավորված գույքագրման փորձագիտական խմբից պահանջել 2012 թվականի ընթացքում կատարած աշխատանքների տարեկան գրավոր հաշվետվություն և այն ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ.

5) հանձնարարել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Ա. Երիցյանին՝

ա. ՁԼՄ-ներով հանրությանն իրազեկել հակակարկտային կայաններ ունեցող համայնքներում կարկտահարությունից տուժած քաղաքացիների վնասների մասնակի, այլ ոչ ամբողջությամբ փոխհատուցման մասին,

բ. ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ քննության առնել հակակարկտային պաշտպանության համակարգերի առավել արդյունավետ տեսակների ընտրության հարցը և ըստ այդմ ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտի գործողությունների ծրագիր

(Ռ. Հարությունյան, Դ. Դումանյան, Ա. Աշոտյան, Ա. Ղարիբյան, Հ. Թովչյան, Ս. Զաքարյան, Վ. Կարապետյան, Հ. Միրզոյան, Մ. Հերգնյան, Տ. Սարգսյան)

11. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ առողջապահության նախարար Դ. Դումանյանին՝

ա. «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տնօրեն Ռ. Հարությունյանին ներկայացնել դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնների վերանայման և Եվրոմիության գործող ՊԱԳ կանոններին և պահանջներին ներդաշնակեցման միջոցառումների հստակ ժամանակացույց՝ ըստ առաջնահերթությունների,

բ. «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տնօրեն Ռ. Հարությունյանին ներկայացնել տեղական ընկերությունների ՊԱԳ հավաստագրման ժամանակացույց.

գ. իր իսկ առաջարկությանը համապատասխան՝ ներկայացնել տեղական 18 ընկերությունների ՊԱԳ հավաստագրման ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ,

դ. 3.2.2-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի հետ համատեղ քննարկել բուիերի լաբորատոր բազայի արդիականացման (հաշվի առնելով մասնավոր հատվածի կողմից միջոցառման ֆինանսավորման հետ կապված ներկայիս փաստացի իրավիճակը) հնարավոր տարբերակները և առաջարկները ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին.

2) հանձնարարել «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տնօրեն Ռ. Հարությունյանին՝ Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտի գործողությունների ծրագրի՝

ա. 1.1.3-րդ կետին կցել դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնների վերանայման և Եվրոմիության գործող ՊԱԳ կանոններին և պահանջներին ներդաշնակեցման միջոցառումների ժամանակացույցը,

բ. 1.4.1-ին կետին կցել տեղական ընկերությունների ՊԱԳ հավաստագրման ժամանակացույցը,

գ. 4.2.3-րդ կետը հանել,

դ. 6.1.2-րդ կետը համարել կատարված՝ ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելով Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտի արտահանման նպատակային շուկաների վերաբերյալ ուսումնասիրության հաշվետվությունը.

3) առաջարկել «Հայաստանի դեղատաղիրոզների և ներմուծողների միություն» իրավաբանական անձանց միության տնօրեն Ս. Զաքարյանին՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկել տեղական 18 ընկերությունների ՊԱԳ հավաստագրման գործընթացի հետ կապված հարցերը և քննարկման արձանագրությունը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ և ՀՀ առողջապահության նախարարություն:

4) ընդունել ի գիտություն ՀՀ առողջապահության նախարար Դ. Դումանյանի հաղորդումն այն մասին, որ մինիս տարեվերջ (հոկտեմբեր-նոյեմբեր ամիս) ՊԱԳ հավաստագրում կանցնի տեղական 3 ընկերություն:

Ճշգրիտ ճարտարագիտության/ճարտարագիտության ոլորտի գործողությունների
ծրագիր

(Ռ. Հարությունյան, Հ. Հակոբյան, Ա. Խաչատրյան, Ա. Ղարիբյան,
Մ. Հերզնյան, Բ. Ենգիբարյան, Հ. Միրզոյան, Ա. Սալաթյան, Մ. Հերզնյան, Տ. Սարգսյան)

8. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տնօրեն Ռ. Հարությունյանին՝

ա. յուրաքանչյուր ռազմավարական ծրագրի մասով ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել 2012 թվականի տարեկան և 2013 թվականի առաջին եռամսյակի մոնիթորինգի ցուցանիշների հաշվետվություններ,

բ. Արդյունաբերական խորհրդի առաջիկա նիստում յուրաքանչյուր ռազմավարական ծրագրի մասով ներկայացնել 2013 թվականի երկրորդ եռամսյակի մոնիթորինգի ցուցանիշների հաշվետվություն:

2) ընդունել ի գիտություն «Սիտրոնիքս Արմենիա» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Ա. Խաչատրյանի հաղորդումն այն մասին, որ Ազատ տնտեսական գոտում գործունեություն ծավալելու հայտ է ներկայացրել մեկ ընկերություն և մինչև տարեվերջ կանխատեսվում է ևս 7-8 ընկերության հայտ:

3) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին՝ «Սիտրոնիքս Արմենիա» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Ա. Խաչատրյանի հետ համատեղ քննարկել Ազատ

տնտեսական գոտու բացման հետ կապված հարցերը և արդյունքները տեղեկացնել ՀՀ կառավարության աշխատակազմ.

4) հանձնարարել Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանին՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել Վենչուրային հիմնադրամի ստեղծման միջոցառումների հստակ ժամանակացույց.

5) առաջարկել «Նեյշնլ Ինսթրումենթս» ընկերության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Ա. Սալթյանին «Նեյշնլ Ինսթրումենթս» ընկերության գլխավորությամբ հիմնել Ճշգրիտ ճարտարագիտության ասոցիացիա.

6) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տ. Հարությունյանին՝ շահագրգիռ բոլոր մարմիններին ներկայացնել 2012 թվականի տարեկան և 2013 թվականի առաջին եռամսյակի մոնիթորինգի ցուցանիշների հաշվետվություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ